# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Մայիսի 2015թվականի N 15

## «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2015թ մայիսի 13-ի գրությունը՝ «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ին հողամասի տրամադրման մասին և Արարատի գյուղական համայնքի 2015թ մայիսի 20-ի նիստի արձանագրությունը, երկար քննարկումից հետո

Ելույթ ունեցավ պարոն Օրդոյանը , նա ևս մեկ անգամ հիշեցրեց, որ հողամասը հանդիսանում է Հատուկ պահպանվող հողերի կատեգորիայի հողամաս և հիշյալ կարգավիճակի հողամասերի հատկացում / թե օտարում, թե կառուցապատում/ ՀՀ օրենսդրությունը չի թույլատրում, եթե Արարատ գյուղի ավագանին ցանկություն ունի բավարարելու հայտը, ապա պետք է փոփոխվի հողամասի նպատակային նշանակությունը այլ կատեգորիայի , ապա միայն հողամասը կարող է օտարվել, հաշվի առնելով կադաստրային արժեքը և առ այսօր հողամասի վրա կատարված շինարարության ծախսերը, որը կազմում է մոտ 33մլն դրամ, քանզի հողամասը այսօր հանդիսանում է քաղաքաշինական կառույց : Միաժամանակ ի պատասխան «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ս. Սարգսյանի, հողամասը կառուցապատման իրավունքով ձեռք բերելու մասին, առաջարկի հիշեցվեց, որ գործող օրենսդրությունը արգելում է կառուցապատման իրավունքով հողամասը տրամադրել , եթե նրա նկատմամբ չկան սահմանափակումներ՝

Ավագանին որոշեց առաջարկել «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ին հողամասը ձեռք բերելու երկու տարբերակ

1. Օրենքով սահմանված կարգով կատարել աուդիտորական գնահատում, գնահատված արժեքը հիմք ընդունելով՝ ավագանին կսահմանի հողամասի մեկնարկային գինը և հողամասը կօտարվի «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողի վրա «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ն կկառուցի մարզադաշտ՝ համաձայն ավագանու կողմից հաստատված նախագիծ- նախահաշվի, կկատարվի գույքի փախանակում , այնուհետև հողամասը կվաճառվի կադաստրային արժեքով:

1. ԱՎԱԿՅԱՆ ԻԳՈՐ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

3. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ԽՈՍՏԵՂՅԱՆ ԽՈՍՐՈՎ

6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

7. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

8. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

9. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

10. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

**Համայնքի ղեկավար** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 16

## ՈԿՖ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻ ԿԱՅԱՆԱՍՅՈՒՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և «Գեո Պրոմ ՄայնինգԳոլդ» ՍՊԸ գլխավոր տնօրեն Վլադիմիր Կոզլովի 05.08. 2015թ գրությունը

Ավագանին որոշեց.

1. Օգտագործման իրավունքով տրամադրել Արարատ գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող 80 /ութսուն/ կայանասյուն տրամադրել օգտագործման «Գեո Պրոմ ՄայնինգԳոլդ» ՍՊԸ -ին, հեռախոսակապի մալուխների անցկացման համար, յուրաքանչյուր կայանասյան համար սահմանել 1000 /հազար/դրամ վարձավճար:
2. Հանձնարարել գյուղապետին կնքել օգտագործման տրամադրման պայմանագիր:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԿՅԱՆ ԻԳՈՐ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽՈՍՏԵՂՅԱՆ ԽՈՍՐՈՎ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ
9. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
10. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ